



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

«Պատմական հուշարձանների և կուպ-
տուրական մյուս արժեքների պահպա-
նության նկատմամբ հոգաստարությունը
Հայկական ՍՍՀ քաղաքացիների պարտ-
քըն ու պարտականությունն է»:

(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 66)

Հայկական ՍՍՀ Թումանյանի շրջանի
Ախրավա ավանի կենտրոնական մասնում
բարձրադիր հնարքության վրա գտնվում
է Ախրավայի ամրոցը՝ վանքավիճ հա-
մալիրով։ Ամրոցի տարածքը երեք կող-
մից եզերված է ժայռապատ խոր ձո-
րերով, իսկ հյուսիսային կողմից հնա-
րքությունը է ապահարժին։ Բացի նպաս-
տավոր բնական պայմաններից, ամրո-
ցը պաշտպանված է եղել այժմ էլ գոյու-
թյուն ունեցող բրգավոր բարձրաբերձ
պարհապնդերով, սերտորեն ներդաշնակ-
ված շրջապատի գեղատեսիլ միջավայրի

Վանքավիճ համալիրի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից



Արսիդի որմնանկարի մանրամաս

Բնակչությունը մուտքը բացվում է հյուսիսային կողմից, ունի գուտկող կա-
մարներով բաղակաց, խոր ընկած ըն-
դարձակ սրան՝ նուանոր բրգած աշ-
տարակով։ Ամրոցը կառուցվել է X դա-
րում՝ Բագրատունների Կյուրիկյան
նորդի տիրապետության ժամանակ։

Միջնադարյան Հայաստանի պաշտպա-
նական աշխի ընկնող հենակետերից մե-
կը լինելով, այն Լոռի, Կայս, Կայծոն,
Գագ և այլ ամրոցների մետ միասին
կարևոր դեր է կատարել Հայաստանի
հյուսիսարևելլան շրջանների անվտան-
գության, կենտրոնական Հայաստանից

գողարքով դեպի Վրաստան տանող ճանապարհի մասույցների պահպանության գործում:

XIII դարի պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին ամրոցը հիշում են Պղնձահանք անունով: Նույն պատմիչների հաղորդումից տեղեկանում ենք, որ վանքի գլխավոր եկեղեցին՝ Ս. Աստվածածինը XIII դարի սկզբին կառուցել է ամրապահապար Խմանե Զաքարյան Երկայնաբազուկը գոյոցիցուն ունեցող հայկական միաբնակ


հաստատությունը դարձնելով վրացահայութ: Եկեղեցին գտնվում է ամրոցի տարածքի կենտրոնական մասում երկայնական առանցքին ուղղահայաց: Իր նորինվածքով այն գմբեթավոր բազիիկ եկեղեցիների տիպից սերված տարբերակ է, որտեղ գմբեթակիր արևելյան զոյգ մույթերը համատեղված են արփիի եզրային ելուստների հետ: Երկայնական ուղղությամբ ձգվող աղոթարանը զոյգ կամարաշերով բաժանված է երեք հավի, որոնցից կենտրոնականը (կրկնա-

կի անգամ լայն եզրայիններից) արևելյան կողմում ավարտվում է ցածր քանի ունեցող, խոր ընկած, հատակագծով կիաշրջանաձև արքիով, իսկ եզրայինները՝ երկնադրական պահպանություն:

Քաղկեդոնական դավանանքին հարած հայ իշխանի պատվերով կառուցված լինելն իր կնիքը է դրել եկեղեցու հատակագծային նորինվածքի ու ճարտարապետական հարդարանքի վրա՝ օժնելով վրացանորյամբ: Այդ մասին են վկայում արևմտյան կողմի կամարական բաց պահ-գավիթը, ճակատների բանդակագրդ ուղիղեթիք, արևելյան ճակատի պունակինչերով եզրոված զոյգ որմնախորշերն ու դրանց ֆետոնազարդ որմնակամարները, ինչպես նաև առատորներ կիրառված զարդանախշերի մոտիվները:

Ս. Աստվածածին եկեղեցին հոչակված է իր առաջնակարգ և բարձրարվեստ որմնանկարներով, որոնցով ծածկված են ներսի պատերը, մույթերը, միջնապատերը, կամարատակերը: Դրանք բնութագրվում են պատկերագրական կատարելությամբ, թեմատիկայի հարստությամբ և երանեցների (որոնցով գերիշխում է կապույտը) բազմազանությամբ: Առանձնապես հիշատակելի են Աստվածամայրը գաճի վրա, Սուրբ հաղորդություն, Հովհաննես Կարապետ թեմաներով կատարված որմնանկարները, մինչև գոտեկատեղը և ամբողջ հա-

Եկեղեցու հիմնախարենմույն տեսքը



Արևելյան պատի մանրամաս

սակով կանգնած սրբերի պատկերները՝ մուցերի վրա և կամարատակերին:

Վաճիք տարածքի հյուսիսարևմտյան կողմում գտնվում է միանալ թաղածածկ եկեղեցին, որի կիսաշրջանաձև


արքիդ դուրս է գալիս արևելյան պատի սահմանագծից: Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ եզերված պարզ տրամատի եզրակալով: Արևմտյան պատին կից ունեցել է երկթեք կտորով պահանջանակ գավիթ, որը չի պահպանվել:

Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային կողմում երան ողղահայաց տեղադրությամբ, գտնվել է վաճիք միաբանության երկիրկանի շենքը, որից ներկայում մնում են պատերը: Այն եղել է փայտաշեն ծածկով պրահաճև ընդարձակ կառուց, որի համար որպես արեւելյան պատ ծառավել է պարիսպ: Հյուսիսային պատը կիսաշրջանաձև է, որից բացվում է մուտք՝ դեպի սուրբենոյա միջանցքը:

Վաճիք տարածքից դուրս՝ Ախտավա ավանի սահմաններում, կանգուն կամ կիսավեր վիճակում կան X—XIII դժ. եկեղեցիներ, մասուններ, պաշտպանական կառուցներ: Դրանցից են՝ ս. Երրորդության վանքը (բաղկացած երկու կից եկեղեցիներից, մասունից, արտաքին սրբից, սուրբենոյա շինությունից), ս. Գևորգ եկեղեցին, վաճիքի դեպի արևմուտք գտնվող զույգ եկեղեցիները, Բարսեղի մատուռը և այլն, որոնք իրենց հերթին վկայում են Պղնձահանք—Ախտավայի միջնադարյան հարուստ անցյալի մասին:

1937 թ. թիթեղապատվել է Ս. Աստվածածին եկեղեցու կտորը: 1940—41 թթ. և 1970-ական թթ. ամրացվել են

Արևմտյան պահի մուցերի մանրամաս



Հյուսիսային մուտքը

որմնանկարները: 1958—59 թթ. ՀՍՍՀ պետական հուշարձանների պահպանության բաժնի կողմից նորոգվել է ամրոցի գլխավոր մուտքն ու կողքի բուրգերը, վերացվել բակում XIX դ. կա-

ռուցիված փայտե խարխուլ զանգակատունը: 1975—78 թթ. նորոգվել են եկեղեցու պատերի վերնամասերը, կտորի թիթենը փոխարինվել է բազալտ սպեկուլով:



Վարդյակ

ԳՄԴ 63.3 (2Հ) 6

Զ 863

**Շախնշան Գառնիկ Սմբատի
Զանինցան Անաստաս Սարգսի
ԱլոթԱԼՈ**

**Шахкян Гарник Смбатович
Джанинян Анастас Саркисович
АХТАЛА**

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван — 1984

Զ 0505040000
701 (01) 84 պատվեր

**© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի
հուշարձանների պահպանության
ընկերություն, 1984**

Մասն. խմբագիր՝ **Վ. Մարությունյան**
Խմբագիր՝ **Է. Գ. Շահնազարյան**
Նկարիչ՝ **Օ. Ս. Ասատրյան**
Գեղ. խմբագիր՝ **Ս. Ս. Մկրտչյան**
Տեխն. խմբագիր՝ **Կ. Գ. Սարգսյան**
Վերատուգող սրբագրիչ՝ **Լ. Ս. Սահակյան**

ԻԲ 2/Կ

Հանձնված է շարվածքի 3.09.1984 թ.:
Ստորագրված է տպագրության 20.12.
1984 թ.:

Ֆորմատ՝ $70 \times 108^{1/32}$: Թուղթ՝ «Կալվա-
պատ», 0,35 տպ. պալմ. մամ. երատ.:
0,33 մամ.: Պատվեր 2495: Վ.փ 09518:
Տպաքանակ 10000: Գինը 10 կրո.:
«Հայաստան» երատարակչություն, Երե-
վան—9, Տեղյան 91:
Издательство «Айастан», Ереван-9,
ул. Теряна, 91.

ՀՍՍՀ երատարակչությունների, պոլի-
գրաֆիայի և գրքի առևտորի գրեթերի
պետական կոմիտեի № 1 տպարան,
Երևան, Ալավերդյան 65:

Типография № 1 Госкомитета Арм.
ССР по делам издательств, полигра-
фии и книжной торговли. Ереван,
ул. Алавердяна, 65.